ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

N152 **26.02.2025թ**

«Էվելինա Գրիգորյան» ԱՁ

Ք. Երևան, Ավան Առինջ 1մրշրջ 1/82 բն 10

ՀՎՀՀ 26591249

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Էվելինա Գրիգորյան» ԱՁ-ի միջև 12.12.2024թ-ին կնքված ՍՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին

ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Էվելինա Գրիգորյան» ԱՁ-ի միջև 12.12.2024թ-ին կնքված ՍՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-1 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով Ընկերությունը ստանձել է պայմանագրով սահմանված սննդի մատակարարման պարտավորությունը:

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետը և ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Էվելինա Գրիգորյան» ԱՁ-ի միջև կնքված ՍՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-1 ծածկագրով պայմանգրի 8.5 և 8.15 կետերը՝ «Էվելինա Գրիգորյան» ԱՁ-ի էլեկտրոնային փոստին /evelina-grigoryan1983@mail.ru/ 03.02.2025 թվականին ուղարկվել է ծանուցում՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագիրն ուժի մեջ մտցնելու մասին համաձայնագիր:Սակայն Ձեր կազմակերպությունը օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել և պատվիրատուին ուղարկել համաձայանգիրը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի

պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում:

Այսպիսով՝ Պատվիրատուի ղեկավարի որոշումը կներկայացվի լիազոր մարմնին «Էվելինա Գրիգորյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, իսկ մատակարարի կողմից միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացրած պայմանագրի ապահովումը 864550 /ութ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով և որակավորման ապահովումը 1296826 /մեկ միլիոն երկու հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր քսանվեց/ ՀՀ դրամի չափով կներկայացվեն մատակարարին սպասարկող բանկ՝ գումարները գանձելու նպատակով:

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա, բ ենթակետերով նախատեսված լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

ՏՆՕՐԵՆ՝ **ԱՐԹՈՒՐ ԽԱԼԱՖՅԱՆ**

Կատարող՝ գնումների համակարգող
Մերի Մկրտչյան
Հեռ. 055990090